Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1206-08.12.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6.1-ին հոդվածով.

«**Հոդված 6.1. Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը**

1. Վարչական դատավարության մասնակիցները պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

2. Դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվում են չարաշահմանը համաչափ՝ սույն օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 64.4-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 64.4. Գործի վարումն էլեկտրոնային եղանակով**»,

2) 1-ին մասում հանել «, բացառությամբ այն փաստաթղթերի (նյութերի), որոնք ստացվել են սույն օրենսգրքի 64.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետով չսահմանված ֆիզիկական անձի կողմից ուղղ. կամ ուղարկվել են նրան, և սույն գլխով նախատեսված այլ դեպքերի» բառերը և կետադրական նշանները,

3) 2-րդ մասում «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 64.5-րդ հոդվածի 5-րդ մասում «ուղարկելու մասին համապատասխան ապացույցի սկանավորված տարբերակը» բառերը փոխարինել «դատավարական փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը Համակարգը չօգտագործող անձին ուղարկելը հավաստող ապացույց» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 64.7-րդ հոդվածի 2-րդ մասում «երեք աշխատանքային օր հետո» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով գործի քննության հատուկ ժամկետներ նախատեսված լինելու դեպքում՝ Համակարգն օգտագործող անձին հասանելի դառնալու հաջորդ օրը» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 64.11-րդ հոդվածի 1-ին մասում «Համակարգի միջոցով, և գործը» բառերը փոխարինել «Համակարգի միջոցով կամ գործը» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 79-րդ հոդվածում.

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում, որը եռօրյա ժամկետում ուղարկում է հայցվորին: Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը հայցվորին վերադարձվում են վերջինիս դիմումի հիման վրա, որի դեպքում գործին կցվում են դրանց պատճենները:»,

2) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե հայցադիմումը վերադարձնելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, ապա վարչական դատարանը կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի վերաբերյալ որոշում է կայացնում բողոքարկման արդյունքում հայցադիմումը վերադարձնելու մասին վարչական դատարանի որոշման վերաբերյալ դատական ակտ կայացվելուց հետո:»,

3) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կրկին ներկայացվող հայցադիմումին կցվում է դիմում՝ վարչական դատարանի կողմից արձանագրված առերևույթ սխալները վերացված լինելու և այն կրկին ներկայացնելու մասին, իսկ դիմում չներկայացվելու դեպքում հայցադիմումը մուտքագրվում է ընդհանուր կանոններով՝ որպես նոր գործ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 82-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «գործ» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ վարչական դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող գործեր, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-1.3-րդ մասերով.

«1.1. Գործերը միացնելու հիմքերը հայտնաբերած դատավորը միացման ենթակա մյուս գործը քննող դատավորին անհապաղ գրավոր տեղեկացնում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքների մասին՝ առկայության դեպքում տրամադրելով նաև միացման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները:

1.2. Միացման ենթակա գործերը քննող դատավորների գրավոր համաձայնության դեպքում, ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում միացման ենթակա գործը փոխանցվում է այն դատավորին, որի վարույթում գտնվում է առավել վաղ վարույթ ընդունված հայցի հիման վրա հարուցված գործը, իսկ եթե հայցերը վարույթ են ընդունվել նույն օրը՝ այն դատավորին, որի վարույթում գտնվող գործն առավել վաղ է մուտքագրվել դատարան:

1.3. Սույն հոդվածի 1.2-րդ մասում նշված դատավորը գործը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կայացնում է գործերը մեկ վարույթում միացնելու և գործը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշում, եթե առկա չեն ինքնաբացարկի հիմքեր: Ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում դատավորը կայացնում է ինքնաբացարկ հայտնելու մասին որոշում և միացման ենթակա գործերն անհապաղ հանձնում է միացման ենթակա գործերով հայցը հաջորդն առավել վաղ վարույթ ընդունած, իսկ հայցերը նույն օրը վարույթ ընդունված լինելու դեպքում՝ հաջորդ առավել վաղ մուտքագրված գործը քննող դատավորին:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Վարչական դատարանը գործերը մեկ վարույթում միացնելու կամ մի քանի միացված պահանջներ առանձնացնելու և գործը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշումն ուղարկում է դատավարության բոլոր մասնակիցներին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասում «նրա իրավունքների պաշտպանությունը» բառերից հետո լրացնել «, և վարչական ակտը կասեցնելու դեպքում չի խախտվում այնպիսի հանրային շահ, որը տվյալ իրավիճակում գերակա է միջնորդություն ներկայացնող անձի շահի նկատմամբ» բառերը:

Հոդված 9. Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասում «միջնորդություն ներկայացնող անձին» բառերից հետո լրացնել «, և նման միջոցներ ձեռնարկելը չի խախտում այնպիսի հանրային շահ, որը տվյալ իրավիճակում գերակա է միջնորդություն ներկայացնող անձի շահի նկատմամբ» բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 96-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «երկշաբաթյա» բառը փոխարինել «դիմումն ստանալու պահից տասնօրյա» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում այն դեպքերում, երբ հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմում ներկայացնում է իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ որպես ներկայացուցիչ փաստաբան ունեցող ֆիզիկական անձը:»:

Հոդված 11. Օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին մասում «137.4-րդ» թվերից հետո լրացնել «, 169.16-րդ, 173.2-րդ» թվերը:

Հոդված 12. Օրենսգրքի 118.1-ին հոդվածում.

1) 1-ին մասի առաջին նախադասությունում «Դատավարության մասնակիցների» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին, 1.2-րդ և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավարության մասնակիցների» բառերով,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո էլեկտրոնային համակարգից օգտվող դատավարության մասնակիցներն իրավունք ունեն մեկամսյա ժամկետում ծանոթանալու ներկայացված ապացույցներին և առարկություններին, դրանց հաշվառմամբ փոփոխելու հայցի հիմքը կամ առարկան, ներկայացնելու լրացուցիչ դիրքորոշում կամ լրացուցիչ ապացույցներ: Էլեկտրոնային համակարգից չօգտվող դատավարության մասնակցի համար վարչական դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ապացույցներին և առարկություններին ծանոթանալու, դրանց հաշվառմամբ հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու, լրացուցիչ դիրքորոշում հայտնելու կամ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու համար:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ և 7-րդ մասերով.

«6. Սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործերով պատասխանողն իր պատասխանը, առարկությունները, միջնորդությունները, ինչպես նաև իր առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող է ներկայացնել դատարան հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո 1-ամսյա ժամկետում՝ կցելով դրանց պատճենները դատավարության մյուս մասնակիցներին ուղարկելը հավաստող ապացույցը, իսկ եթե այդ փաստաթղթերը ծավալուն են կամ դրանք դժվար է պատճենահանել՝ դատավարության մյուս մասնակցին ուղարկելով ծանուցում, որ նշված փաստաթղթերը դրանց ծանոթանալու նպատակով դեպոնացվելու են վարչական դատարանում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում՝ պատասխանողի դիրքորոշումը ստանալուց հետո հայցվորը 1-ամսյա ժամկետում կարող է ներկայացնել իր առարկությունները պատասխանողի ներկայացրած դիրքորոշման վերաբերյալ, այնուհետև կողմերը կարող են երկշաբաթյա ժամկետում արձագանքել միմյանց դիրքորոշումներին:»:

Հոդված 13. Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) հայցվորը (դիմողը) դատարան է դիմել ոչ ճիշտ հայցատեսակով, և ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինելու վերաբերյալ վարչական դատարանի մատնանշումից հետո հայցվորը (դիմողը) այն չի փոխարինել պատշաճ հայցատեսակով:»:

Հոդված 14. Օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերող անձին ուղարկվում է վերաքննիչ դատարանի որոշումը: Բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը բողոք բերող անձին վերադարձվում են վերջինիս դիմումի հիման վրա, որի դեպքում գործին կցվում են դրանց պատճենները:»:

Հոդված 15. Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին կետով.

«2.1) բավարարում է վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, եթե վերաքննիչ բողոքը բերվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի դեմ.»:

Հոդված 16. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակության՝ նոր 4.1 կետով.

«4.1. եթե վերաքննիչ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ընդունելով բողոքարկված դատական ակտի թե փաստական, թե իրավական հիմնավորումները, հանգում է այն եզրակացության, որ վարչական դատարանը գործի լուծման մասով եկել է ճիշտ եզրակացության, և բացակայում է սխալ պատճառաբանված դատական ակտն ամբողջությամբ պատճառաբանելու, կամ թերի պատճառաբանված դատական ակտը մասնակի պատճառաբանելու անհրաժեշտությունը, ապա առանց լրացուցիչ պատճառաբանելու միայն հղում է կատարում բողոքարկված դատական ակտով հաստատված փաստերին, դրա իրավական հիմնավորումներին և պատճառաբանություններին.»:

Հոդված 17. Օրենսգրքի 148-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-ին մասով.

«8.1. Սույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց հինգ օր հետո:»:

2) 9-րդ մասից հանել «, եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք չի ներկայացվում» բառերը:

Հոդված 18. Օրենսգրքի 165-րդ հոդվածում 2-րդ մասում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով:

Հոդված 19. Օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին կետով.

«2.1) բավարարում է վճռաբեկ բողոքը՝ փոփոխելով դատական ակտի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, եթե վճռաբեկ բողոքը բերվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի դեմ.»:

Հոդված 20. Օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Դիմումը վերադարձնելու, առանց քննության թողնելու և վարույթ ընդունելը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանը գործն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, իսկ Վճռաբեկ դատարանը եռամսյա ժամկետում կայացնում է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում:»:

Հոդված 21. Օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասում «տասնհինգօրյա» բառը փոխարինել «մեկամսյա» բառով:

Հոդված 22. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 188.1-ին հոդվածով.

«**Հոդված 188.1. Դիմումն առանց քննության թողնելը և դիմումը վարույթ ընդունելը մերժելը**

1. Վերաքննիչ դատարանը դիմումը վարույթ ընդունելը մերժում է սույն օրենսգրքի 137-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով:

2. Վճռաբեկ դատարանը դիմումն առանց քննության է թողնում և վարույթ ընդունելը մերժում է սույն օրենսգրքի համապատասխանաբար 160-րդ հոդվածի 1-ին մասով և 162-րդ հոդվածներով սահմանված հիմքերով և կարգով:»:

Հոդված 23. Օրենսգրքի 195-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալուց հինգ օր հետո և կարող է նույն ժամկետում բողոքարկվել վերաքննիչ դատարան:»:

Հոդված 24. Օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասում «5» թիվը փոխարինել «3» թվով:

Հոդված 25. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների (դիմումների) և դրանց հիման վրա հարուցված գործերի վրա:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումների (դիմումների) քննության արդյունքով կայացված դատական ակտերի, այդ թվում՝ հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու մասին որոշումների բողոքարկման դեպքում կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Կ-1206-08.12.2025,16.01.2026-ՊԻ-011/1

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6.1-ին հոդվածով.

«**Հոդված 6.1. Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը**

1. Վարչական դատավարության մասնակիցները պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

2. Դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվում են չարաշահմանը համաչափ՝ սույն օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 64.4-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 64.4. Գործի վարումն էլեկտրոնային եղանակով**»,

2) 1-ին մասում հանել «, բացառությամբ այն փաստաթղթերի (նյութերի), որոնք ստացվել են սույն օրենսգրքի 64.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետով չսահմանված ֆիզիկական անձի կողմից ուղղ. կամ ուղարկվել են նրան, և սույն գլխով նախատեսված այլ դեպքերի» բառերը և կետադրական նշանները,

3) 2-րդ մասում «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 64.5-րդ հոդվածի 5-րդ մասում «ուղարկելու մասին համապատասխան ապացույցի սկանավորված տարբերակը» բառերը փոխարինել «դատավարական փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը Համակարգը չօգտագործող անձին ուղարկելը հավաստող ապացույց» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 64.7-րդ հոդվածի 2-րդ մասում «երեք աշխատանքային օր հետո» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով գործի քննության հատուկ ժամկետներ նախատեսված լինելու դեպքում՝ Համակարգն օգտագործող անձին հասանելի դառնալու հաջորդ օրը» բառերը:

Հոդված 5. Օրենսգրքի 64.11-րդ հոդվածի 1-ին մասում «Համակարգի միջոցով, և գործը» բառերը փոխարինել «Համակարգի միջոցով կամ գործը» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 79-րդ հոդվածում.

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում, որը եռօրյա ժամկետում ուղարկում է հայցվորին: Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը հայցվորին վերադարձվում են վերջինիս դիմումի հիման վրա, որի դեպքում գործին կցվում են դրանց պատճենները:»,

~~Որոշման հետ միաժամանակ հայցվորին ուղարկվում են նաև հայցադիմումը և դրան կից ներկայացված այն փաստաթղթերը, որոնցում հայտնաբերվել են առերևույթ սխալներ՝ միաժամանակ գործին կցելով դրանց պատճենները: Այդ դեպքում~~

~~հայցադիմումը կրկին ներկայացնելիս հայցվորը դրան չի կցում վարչական դատարանի չվերադարձված փաստաթղթերը:»,~~

2) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե հայցադիմումը վերադարձնելու մասին վարչական դատարանի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, ապա վարչական դատարանը կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի վերաբերյալ որոշում է կայացնում բողոքարկման արդյունքում հայցադիմումը վերադարձնելու մասին վարչական դատարանի որոշման վերաբերյալ դատական ակտ կայացվելուց հետո:»,

3) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կրկին ներկայացվող հայցադիմումին կցվում է դիմում՝ վարչական դատարանի կողմից արձանագրված առերևույթ սխալները վերացված լինելու և այն կրկին ներկայացնելու մասին, իսկ դիմում չներկայացվելու դեպքում հայցադիմումը մուտքագրվում է ընդհանուր կանոններով՝ որպես նոր գործ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 82-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «գործ» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ վարչական դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող գործեր, եթե դրանց միջև առկա է փոխադարձ կապ և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-1.3-րդ մասերով.

«1.1. Գործերը միացնելու հիմքերը հայտնաբերած դատավորը միացման ենթակա մյուս գործը քննող դատավորին անհապաղ գրավոր տեղեկացնում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հանգամանքների մասին՝ առկայության դեպքում տրամադրելով նաև միացման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները:

1.2. Միացման ենթակա գործերը քննող դատավորների գրավոր համաձայնության դեպքում, ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում միացման ենթակա գործը փոխանցվում է այն դատավորին, որի վարույթում գտնվում է առավել վաղ վարույթ ընդունված հայցի հիման վրա հարուցված գործը, իսկ եթե հայցերը վարույթ են ընդունվել նույն օրը՝ այն դատավորին, որի վարույթում գտնվող գործն առավել վաղ է մուտքագրվել դատարան:

1.3. Սույն հոդվածի 1.2-րդ ~~կետում~~ մասում նշված դատավորը գործը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կայացնում է գործերը մեկ վարույթում միացնելու և գործը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշում, եթե առկա չեն ինքնաբացարկի հիմքեր: Ինքնաբացարկի հիմքերի առկայության դեպքում դատավորը կայացնում է ինքնաբացարկ հայտնելու մասին որոշում և միացման ենթակա գործերն անհապաղ հանձնում է միացման ենթակա գործերով հայցը հաջորդն առավել վաղ վարույթ ընդունած, իսկ հայցերը նույն օրը վարույթ ընդունված լինելու դեպքում՝ հաջորդ առավել վաղ մուտքագրված գործը քննող դատավորին:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Վարչական դատարանը գործերը մեկ վարույթում միացնելու կամ մի քանի միացված պահանջներ առանձնացնելու և գործը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշումն ուղարկում է դատավարության բոլոր մասնակիցներին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասում «նրա իրավունքների պաշտպանությունը» բառերից հետո լրացնել «, և վարչական ակտը կասեցնելու դեպքում չի խախտվում այնպիսի հանրային շահ, որը տվյալ իրավիճակում գերակա է միջնորդություն ներկայացնող անձի շահի նկատմամբ» բառերը:

Հոդված 9. Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասում «միջնորդություն ներկայացնող անձին» բառերից հետո լրացնել «, և նման միջոցներ ձեռնարկելը չի խախտում այնպիսի հանրային շահ, որը տվյալ իրավիճակում գերակա է միջնորդություն ներկայացնող անձի շահի նկատմամբ» բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 96-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «երկշաբաթյա» բառը փոխարինել «դիմումն ստանալու պահից տասնօրյա» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում այն դեպքերում, երբ հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմում ներկայացնում է իրավաբանական անձը,

պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ որպես ներկայացուցիչ փաստաբան ունեցող ֆիզիկական անձը:»:

Հոդված 11. Օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին մասում «137.4-րդ» թվերից հետո լրացնել «, 169.16-րդ, 173.2-րդ» թվերը:

~~1. Օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշումների մեջ նշվում է գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օրը: Վարչական դատարանը գրավոր ընթացակարգով գործի քննության ընթացքում կարող է փոփոխել դատական ակտի հրապարակման օրը: Սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օրը նշանակվում է սույն օրենսգրքի 118.1-ին հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետի լրանալուց հետո երկշաբաթյա ժամկետում, իսկ դատական ակտի հրապարակման օրը փոփոխելիս պետք է պահպանվի սույն օրենսգրքի 118.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը:»:~~

Հոդված 12. Օրենսգրքի 118.1-ին հոդվածում.

1) 1-ին մասի առաջին նախադասությունում «Դատավարության մասնակիցների» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին, 1.2-րդ և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավարության մասնակիցների» բառերով,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո էլեկտրոնային համակարգից օգտվող դատավարության մասնակիցներն իրավունք ունեն մեկամսյա ժամկետում ծանոթանալու ներկայացված ապացույցներին և առարկություններին, դրանց հաշվառմամբ փոփոխելու հայցի հիմքը կամ առարկան, ներկայացնելու լրացուցիչ դիրքորոշում կամ լրացուցիչ ապացույցներ: Էլեկտրոնային համակարգից չօգտվող դատավարության մասնակցի համար վարչական դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ապացույցներին և առարկություններին ծանոթանալու, դրանց հաշվառմամբ հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու, լրացուցիչ

դիրքորոշում հայտնելու կամ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու համար ~~Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո, բացառությամբ սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործերի, վարչական դատարանը դատավարության մասնակիցների համար սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ ապացույցներին և առարկություններին ծանոթանալու, դրանց հաշվառմամբ հայցի հիմքի կամ առարկայի փոփոխություն կատարելու, լրացուցիչ դիրքորոշում հայտնելու, ինչպես նաև ապացույցներ ներկայացնելու համար~~:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ և 7-րդ մասերով.

«6. Սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գործերով պատասխանողն իր պատասխանը, առարկությունները, միջնորդությունները, ինչպես նաև իր առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող է ներկայացնել դատարան հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո 1-ամսյա ժամկետում՝ կցելով դրանց պատճենները դատավարության մյուս մասնակիցներին ուղարկելը հավաստող ապացույցը, իսկ եթե այդ փաստաթղթերը ծավալուն են կամ դրանք դժվար է պատճենահանել՝ դատավարության մյուս մասնակցին ուղարկելով ծանուցում, որ նշված փաստաթղթերը դրանց ծանոթանալու նպատակով դեպոնացվելու են վարչական դատարանում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում՝ պատասխանողի դիրքորոշումը ստանալուց հետո հայցվորը 1-ամսյա ժամկետում կարող է ներկայացնել իր առարկությունները պատասխանողի ներկայացրած դիրքորոշման վերաբերյալ, այնուհետև կողմերը կարող են երկշաբաթյա ժամկետում արձագանքել միմյանց դիրքորոշումներին:»:

Հոդված 13. Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) հայցվորը (դիմողը) դատարան է դիմել ոչ ճիշտ հայցատեսակով, և ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինելու վերաբերյալ վարչական դատարանի մատնանշումից հետո հայցվորը (դիմողը) այն չի փոխարինել պատշաճ հայցատեսակով:»:

Հոդված 14. Օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերող անձին ուղարկվում է վերաքննիչ դատարանի որոշումը: Բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը բողոք բերող անձին վերադարձվում են վերջինիս դիմումի հիման վրա, որի դեպքում գործին կցվում են դրանց պատճենները:»:

~~**Հոդված 14.**~~**Հոդված 15.** Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին կետով.

«2.1) բավարարում է վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, եթե վերաքննիչ բողոքը բերվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի դեմ.»:

~~**Հոդված 15.**~~**Հոդված 16.** Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակության նոր՝ 4.1 կետով . ~~Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.~~

«4.1. եթե վերաքննիչ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ընդունելով բողոքարկված դատական ակտի թե՛ փաստական, թե՛ իրավական հիմնավորումները, հանգում է այն եզրակացության, որ վարչական դատարանը գործի լուծման մասով եկել է ճիշտ եզրակացության, և բացակայում է սխալ պատճառաբանված դատական ակտն ամբողջությամբ պատճառաբանելու, կամ թերի պատճառաբանված դատական ակտը մասնակի պատճառաբանելու անհրաժեշտությունը, ապա առանց լրացուցիչ պատճառաբանելու միայն հղում է կատարում բողոքարկված դատական ակտով հաստատված փաստերին, դրա իրավական հիմնավորումներին և պատճառաբանություններին. ~~«բ. այն փաստերը, որոնք հաստատել է վարչական դատարանը և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, սակայն վերաքննիչ դատարանը դրանց վերաբերյալ հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի մասով վարչական դատարանը սխալ թույլ չի տվել և միաժամանակ առկա չէ բողոքարկված դատական ակտն ամբողջությամբ պատճառաբանելու կամ թերի պատճառաբանված դատական ակտը~~

~~մասնակի պատճառաբանելու անհրաժեշտություն, ապա վերաքննիչ դատարանն առանց լրացուցիչ պատճառաբանելու միայն հղում է կատարում բողոքարկված դատական ակտի իրավական հիմնավորումներին և պատճառաբանություններին,.~~»:

~~Հոդված 16.~~Հոդված 17. Օրենսգրքի 148-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-ին մասով.

«8.1. Սույն օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց հինգ օր հետո:»:

2) 9-րդ մասից հանել «, եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք չի ներկայացվում» բառերը:

~~Հոդված 17.~~Հոդված 18. Օրենսգրքի 165-րդ հոդվածում 2-րդ մասում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով:

~~Հոդված 18.~~Հոդված 19. Օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին կետով.

«2.1) բավարարում է վճռաբեկ բողոքը՝ փոփոխելով դատական ակտի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, եթե վճռաբեկ բողոքը բերվել է գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի դեմ.»:

~~Հոդված 19.~~Հոդված 20. Օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Դիմումը վերադարձնելու, առանց քննության թողնելու և վարույթ ընդունելը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանը գործն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, իսկ Վճռաբեկ դատարանը եռամսյա ժամկետում կայացնում է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում:»:

~~Հոդված 20.~~Հոդված 21. Օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասում «տասնհինգօրյա» բառը փոխարինել «մեկամսյա» բառով:

~~Հոդված 21.~~Հոդված 22. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 188.1-ին հոդվածով.

«**Հոդված 188.1. Դիմումն առանց քննության թողնելը և դիմումը վարույթ ընդունելը մերժելը**

1. Վերաքննիչ դատարանը դիմումը վարույթ ընդունելը մերժում է սույն օրենսգրքի 137-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով:

2. Վճռաբեկ դատարանը դիմումն առանց քննության է թողնում և վարույթ ընդունելը մերժում է սույն օրենսգրքի համապատասխանաբար 160-րդ հոդվածի 1-ին մասով և 162-րդ հոդվածներով սահմանված հիմքերով և կարգով:»:

~~Հոդված 22.~~Հոդված 23. Օրենսգրքի 195-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով.

«3. Վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալուց հինգ օր հետո և կարող է նույն ժամկետում բողոքարկվել վերաքննիչ դատարան:»:

~~Հոդված 23.~~Հոդված 24. Օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասում «5» թիվը փոխարինել «3» թվով:

~~Հոդված 24.~~Հոդված 25. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների (դիմումների) և դրանց հիման վրա հարուցված գործերի վրա:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումների (դիմումների) քննության արդյունքով կայացված դատական ակտերի, այդ թվում՝ հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու մասին որոշումների բողոքարկման դեպքում կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1206-08.12.2025-ՊԻ-011/0) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1206[1]-08.12.2025-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
1.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 6-րդ հոդված**	Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով առաջարկում ենք հանել Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքի) 79-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման հետ հայցվորին հայցադիմումն ու դրանց կից	**Ընդունվել է:** Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է առաջարկվող խմբագրությամբ:	

			ներկայացված և առերևույթ սխալներ պարունակող փաստաթղթերն ուղարկելու կարգավորումը: Հայցվորը կարող է դիմել վարչական դատարանին և ստանալ իրեն անհրաժեշտ փաստաթղթերը: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝ «2. Վարչական դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում, որը եռօրյա ժամկետում ուղարկում է հայցվորին: Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը հայցվորին վերադարձվում են վերջինիս դիմումի հիման վրա, որի դեպքում գործին կցվում են դրանց պատճենները:»:		
2.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 7-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենսգրքի 82-րդ հոդվածում լրացվող՝ 1.3-րդ մասում կիրառված «կետում» բառը փոխարինել «մասում» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ	**Ընդունվել է:** Օրենսգրքի 82-րդ հոդվածում լրացվող՝ 1.3-րդ մասում կիրառված «կետում» բառը փոխարինվել է «մասում» բառով:	

			հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը:		
3.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 12-րդ հոդված**	Օրենսգրքի 118.2-րդ հոդվածի 2-րդ մասով արդեն սահմանված է, որ դատական ակտի հրապարակման օրվա փոփոխությունը կատարելիս պետք է պահպանել գործերի քննության ժամկետները: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծից հանել Նախագծի 12-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասը:	**Ընդունվել է:** Նախագծի 12-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող կարգավորումը հանվել է Նախագծից: Արդյունքում փոփոխվել է հաջորդ հոդվածների համարակալումը:	
4.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 13-րդ հոդված**	Ներկայումս վարչական գործերի վարումն ամբողջությամբ իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով, ինչի պայմաններում դատավարության մասնակիցների կողմից ապացույցների ներկայացումը, դրանց հետ ծանոթացումը, ինչպես նաև դիրքորոշումների և միջնորդությունների ներկայացումը կատարվում է օպերատիվ և առանց ֆիզիկական խոչընդոտների: Գործող կարգավորմամբ գրավոր ընթացակարգի երկրորդ փուլում	**Ընդունվել է:** Նախագծի 13-րդ հոդվածով (լրամշակված՝ 12-րդ) նախատեսվող՝ Օրենսգրքի 118.1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			ժամկետի սահմանումն ամբողջությամբ վերապահված է վարչական դատարանի հայեցողությանը՝ նույնիսկ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը օգտվում է էլեկտրոնային համակարգից և ունի բոլոր տեխնիկական հնարավորությունները նշված գործողությունները ժամանակին և արդյունավետ իրականացնելու համար: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածով (լրամշակված՝ 12-րդ) նախատեսվող՝ Օրենսգրքի 118.1-ին հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալուց հետո էլեկտրոնային համակարգից օգտվող դատավարության մասնակիցներն իրավունք ունեն մեկամսյա ժամկետում ծանոթանալու ներկայացված ապացույցներին և առարկություններին, դրանց հաշվառմամբ փոփոխելու հայցի հիմքը կամ առարկան, ներկայացնելու լրացուցիչ դիրքորոշում կամ լրացուցիչ		

			ապացույցներ: Էլեկտրոնային համակարգից չօգտվող դատավարության մասնակցի համար վարչական դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ապացույցներին և առարկություններին ծանոթանալու, դրանց հաշվառմամբ հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու, լրացուցիչ դիրքորոշում հայտնելու կամ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու համար»:		
5.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Հաշվի առնելով վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը՝ առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի նմանությամբ (այն է՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու դեպքում բողոք բերող անձին վերադարձնել միայն որոշումը, իսկ կից փաստաթղթերը նրան տրամադրել դիմումի հիման վրա) Օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերող անձին ուղարկվում է վերաքննիչ դատարանի որոշումը: Բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը բողոք բերող անձին	**Ընդունվել է:** Նախագծի 14-րդ հոդվածով Օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է առաջարկվող բովանդակությամբ:	

			վերադարձվում են վերջինիս դիմումի հիման վրա, որի դեպքում գործին կցվում են դրանց պատճենները:»:		
6.	**ՀՀ Կառավարություն**	**Նախագծի 16-րդ հոդված**	Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը վերաբերում է բացառապես գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերին: Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 16. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակության նոր՝ 4.1 կետով. «4.1. եթե վերաքննիչ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ընդունելով բողոքարկված դատական ակտի թե՛ փաստական, թե՛ իրավական հիմնավորումները, հանգում է այն եզրակացության, որ վարչական դատարանը գործի լուծման մասով եկել է ճիշտ եզրակացության, և բացակայում է սխալ պատճառաբանված դատական ակտն ամբողջությամբ պատճառաբանելու,	**Ընդունվել է:** Նախագծի 16-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում:	

			կամ թերի պատճառաբանված դատական ակտը մասնակի պատճառաբանելու անհրաժեշտությունը, ապա առանց լրացուցիչ պատճառաբանելու միայն հղում է կատարում բողոքարկված դատական ակտով հաստատված փաստերին, դրա իրավական հիմնավորումներին և պատճառաբանություններին.»:		